

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

2013-2015թթ.

ԱՋԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ¹

ԵՐԵՎԱՆ 2012թ.

¹ Հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի նիստում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Ընդհանուր դրույթներ	4
1. Օրենսդրական համակարգը	4
2. Ինստիտուցիոնալ համակարգը	6
3. Անցած ճանապարհը	7
Ազգային ռազմավարությունը	8
1. Տեսլականը	8
2. Առաքելությունը.....	8
3. Արժեքները	8
4. Սկզբունքները և նպատակները	9
5. Իրագործումը.....	9
6. Վերանայումը և վերահսկողությունը	19

Ներածություն

Սույն ռազմավարությունը մշակվել է ի կատարումն ՖԱԹՖ 40 հանձնարարականներով նախատեսված՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ազգային ռազմավարություն ունենալու պահանջի: Ռազմավարության մշակման համար հիմք է ընդունվել նաև 2010 թվականին հրապարակված «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի ռազմավարական վերլուծությունը»: Սույն ազգային ռազմավարությունը նախատեսված է 2013-2015թթ. ժամանակահատվածի համար:

Փաստաթղթով ներկայացվում են ռազմավարության ընդհանուր դրույթները, տեսլականը, առաքելությունը, արժեքները, սկզբունքները, նպատակները, ինչպես նաև այդ նպատակների իրագործմանն ուղղված միջոցառումները, ակնկալվող արդյունքները, ներգրավված գերատեսչությունները, ռազմավարության վերանայման, դրա կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման կարգը:

Փաստաթուղթն ուղեցույց է հանդիսանում ֆինանսական հետախուզության ազգային մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) Ֆինասական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) գործունեության համար՝ ի կատարումն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի և ՖԴԿ կանոնադրության 13-րդ կետի պահանջների:

Ընդհանուր դրույթներ

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ), ձգտելով ունենալ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կայուն և զարգացած համակարգ, ձեռնարկել է մի շարք հիմնարար քայլեր ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գործող միջազգային փաստաթղթերի, այդ թվում՝ ՖԱԹՖ 40 հանձնարարականների ներդրումը երկրում ապահովելու համար: Ստորև ներկայացված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ձևավորված օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերը, ինչպես նաև այդ ուղղությամբ երկրի անցած ճանապարհը:

1. Օրենսդրական համակարգը

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական դաշտի ձևավորումը սկսվել է ՓԼ/ԱՖ հանցագործությունների քրեականացմամբ: Փողերի լվացումը քրեականացվել է 2003 թվականին, իսկ ահաբեկչության ֆինանսավորումը՝ 2004 թվականին: Քրեականացումից հետո ՓԼ/ԱՖ հանցակազմերում կատարվել են մի շարք փոփոխություններ՝ ՓԼ/ԱՖ ոլորտում գործող միջազգային կոնվենցիաներով նախատեսված սահմանումներին համապատասխանելու նպատակով:

ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին առաջին օրենքն ընդունվել է 2004 թվականին և ուժի մեջ է մտել 2005 թվականին: Առաջին օրենքի ընդունումից հետո ընդունվել են նաև օրենքի դրույթների կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման հիման վրա ներդրվել է բանկերի կողմից կասկածելի գործարքների/գործարար հարաբերությունների վերաբերյալ ԿԲ-ին տեղեկացնելու ինստիտուտը:

Անընդհատ զարգացող համակարգը պահանջում էր միջազգային կազմակերպությունների կողմից ՖԱԹՖ հանձնարարականներին համապատասխանության մասով կատարված գնահատումներով, ինչպես նաև պրակտիկ փորձով վեր հանված որոշակի թերությունների ու բացերի լրացում, ինչի արդյունքում փոփոխություններ են կատարվել նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության մեջ:

Շարունակական զարգացման արդյունքում 2008 թվականին ընդունվել է երկրորդ՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասի» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք): Օրենքի ընդունմամբ անցում է կատարվել իրավական ստորակարգման մի շարք մակարդակներից կազմված օրենսդրության:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջների ներդրման և կիրառության ապահովման նպատակով ընդունվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը, ինչպես նաև հաստատվել են Օրենքով նախատեսված պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների/գործարար հարաբերությունների մասին տեղեկությունների ներկայացման համար նոր հաշվետվական ձևերը:

Օրենքի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մեխանիզմների համասեռ ներդրումից այդ մեխանիզմների՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ գործարկում ապահովելու նպատակով հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց համար ընդունվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցներ:

Պրակտիկ իրավիճակներում գործարքները ՓԼ/ԱՖ առումով կասկածելիության տեսանկյունից ճիշտ որակելու նպատակով հաստատվել է «Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ» ուղեցույցը: Միաժամանակ, հաստատվել է նաև §Կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու կամ ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցները սառեցնելու մասին որոշում կայացնելու կարգը, որով հստակեցվում է Օրենքով սահմանված նշված գործառույթի իրականացման կարգը:

ՖԴԿ-ի կողմից ՓԼ/ԱՖ միտումների և հնարավոր սխեմաների վերաբերյալ պարբերաբար կատարված ռազմավարական վերլուծությունների և միջազգային տիպաբանությունների հիման վրա մշակվել են փողերի լվացման թվով 12 տիպաբանություններ:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական զարգացումները նոր փուլ թևակոխեցին 2009 թվականին ՀՀ ՓԼ/ԱՖ համակարգի երրորդ փուլի գնահատման հաշվետվությամբ ներկայացված երաշխավորությունների իրականացմամբ: Ըստ այդմ, ՖԴԿ-ի և ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների կողմից մշակվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտին առնչվող 15 օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարություն՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու նպատակով:

Երկրում շարունակական աշխատանքներ են կատարվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի հետևողական զարգացումն ապահովելու համար՝ իմպլեմենտացնելով «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կազմակերպության 1988թ. դեկտեմբերի 20-ի կոնվենցիայի (**Վիեննայի կոնվենցիա**), «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Եվրոպայի խորհրդի 1990թ. նոյեմբերի 8-ի կոնվենցիայի (**Ստրասբուրգի կոնվենցիա**), «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կազմակերպության 1999թ. դեկտեմբերի 9-ի միջազգային կոնվենցիայի (**Նյու Յորքի կոնվենցիա**), «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության 2000թ. նոյեմբերի 15-ի կոնվենցիայի (**Պալերմոյի կոնվենցիա**), «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի 2005թ. մայիսի 16-ի կոնվենցիայի (**Վարշավայի կոնվենցիա**) դրույթները, որոնք ՀՀ-ի կողմից վավերացվել են, համապատասխանաբար, 13.09.1993թ., 24.11.2003թ., 16.03.2004թ., 01.07.2003թ. 02.06.2008թ.:

2. Ինստիտուցիոնալ համակարգը

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում առանցքային դեր ունեն ներպետական մակարդակով ներգրավված ՀՀ գերատեսչությունները և հաստատությունները՝ ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ ԿԱ ոստիկանությունը, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտը, ՀՀ բանկերի միությունը, ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ նոտարական պալատը, Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիան: Այդ մարմինների ակտիվ համագործակցությունը հիմք է հանդիսանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի շարունակական զարգացման համար:

Նշված մարմիններից ֆինանսական հետախուզության ազգային մարմին լինելու իրավասությունն օրենքով վերապահվել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնին, որը կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ և ՓԼ/ԱՖ կասկածների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերող, վերլուծող և տեղաբաշխող կառույց է: ՖԴԿ-ի պատասխանատվության ներքո է նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում պետական միասնական քաղաքականության մշակումը, միջազգային համագործակցության ապահովումը, Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացումը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում մասնագիտացված միջազգային կառույցներում:

Ներպետական մարմինների ու կառույցների միջև բազմակողմ համագործակցությունն իրականացվում է նաև ՀՀ Նախագահի հրամանագրով ձևավորված «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) շրջանակներում: Միջգերատեսչական հանձնաժողովի հիմնական խնդիրը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միասնական ու համաձայնեցված պետական քաղաքականության մշակումն ու իրականացումն է: ԿԲ նախագահի ղեկավարությամբ գործող այս հանձնաժողովի կազմը ներառում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված բոլոր իրավասու գերատեսչությունների և հաստատությունների ներկայացուցիչներին: Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումն իրականացվում է Հանձնաժողովի քարտուղարության՝ ՖԴԿ-ի կողմից:

Իրավապահ մարմինների հետ արդյունավետ համագործակցությունը և ՓԼ/ԱՖ ոլորտին առնչվող տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու նպատակով փոխըմբռնման համաձայնագրեր են ստորագրվել ՖԴԿ-ի և ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի միջև:

Միջազգային կապերի ապահովման բնագավառում ՖԴԿ-ն համակարգում է փոխգործակցությունը Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հետ Եվրախորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցության հիման վրա, ինչպես նաև Հանցավոր

ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման հակազդման Եվրասիական խմբի հետ՝ այդ կառույցում Հայաստանի Հանրապետության դիտորդի կարգավիճակի հիման վրա:

Ավելին, ՖԴԿ-ն 2007 թվականից անդամակցում է ֆինանսական հետախուզության մարմինների (այսուհետ՝ ՖՀՄ) համաշխարհային Էզմոնտ խմբին, ինչի շնորհիվ հնարավորություն է ստացել տեղեկատվական անվտանգ ցանցի միջոցով տեղեկատվություն փոխանակել շուրջ 130 երկրների՝ Էզմոնտ խմբին անդամակցող ֆինանսական հետախուզության մարմինների հետ: Օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ երկկողմ փոխգործակցության ամրապնդման նպատակով ՖԴԿ-ն համագործակցության համաձայնագրեր է կնքել 26 երկրների ՖՀՄ-երի հետ:

3. Անցած ճանապարհը

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի զարգացման ուղին սկսվել է 2004 թվականին Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի առաջին փուլի գնահատումից հետո: Այդ գնահատմանը հաջորդիվ մի շարք քայլեր կատարվեցին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրության կատարելագործման, ինչպես նաև ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման ուղղությամբ: Արդյունքում ստեղծվեց ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային մարմինը, միջազգային չափանիշներին մեծամասնությամբ համապատասխանող օրենսդրական դաշտը, հիմք դրվեց ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված ներպետական մարմինների, միջազգային կառույցների, օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ համագործակցությանը, դրանց խորացմանն ու ամրապնդմանը:

2004-2009թթ. ժամանակահատվածում ՀՀ կատարած աշխատանքների արդյունքներն ամրագրվեցին Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի և Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների կողմից 2009թ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի երրորդ փուլի գնահատման հաշվետվությամբ: Մասնավորապես, հաշվետվությամբ արձանագրվեց, որ ՀՀ-ն ունի միջազգային չափանիշներին լայնորեն համապատասխանող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգ, ինչպես նաև տրվեցին այդ համակարգի հետագա բարելավմանն ուղղված մի շարք երաշխավորություններ:

Մեկ տարի անց՝ 2010թ. Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հերթական լիազումար նիստում քննարկվեց և հաստատվեց ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի Առաջընթացի հաշվետվությունը, որով արձանագրվեց նախորդ մեկ տարվա ընթացքում տեղ գտած առաջընթացը, այն է՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտին առնչվող 15 օրենքերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող ՀՀ օրենքների նախագծերի առկայության փաստը: Ներկայումս ակտիվ աշխատանքներ են կատարվում նշված օրենքների նախագծերը վերջնականացնելու և օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունելու ուղղությամբ:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում ՀՀ անցած ճանապարհի վերլուծությունը վկայում է ՀՀ բարձրագույն իշխանությունների կողմից սահմանված հիմնական նպատակի,

մասնավորապես՝ միջազգային չափանիշներին լայնորեն համապատասխանող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգից դեպի այդ չափանիշներին ամբողջությամբ համապատասխանող համակարգի անցում կատարելու հարցում հաստատակամության ու հետևողական ջանքերի մասին:

Ազգային ռազմավարությունը

1. Տեսլականը

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարության տեսլականն է.

- Միջազգային չափանիշներին համապատասխանող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային օրենսդրության և դրա կիրառման ճկուն մեխանիզմների կատարելագործումը,
- ՓԼ/ԱՖ ռիսկերից պաշտպանված տնտեսության և թափանցիկ ֆինանսական համակարգի ապահովումը,
- ՓԼ/ԱՖ հանցագործությունների պատժելիության ապահովումը, դրանց նկատմամբ հասարակական անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը:

2. Առաքելությունը

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարության տեսլականի իրագործումը կատարվում է ներպետական, տարածաշրջանային, միջազգային համատեղ ջանքերի և նախաձեռնությունների համատեղմամբ ու ընդլայնմամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հայաստանյան օրենսդրության և միջազգային չափանիշների արդյունավետ կիրառման միջոցով:

3. Արժեքները

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հաջողությամբ իրականացնելու համար համակարգի բոլոր մասնակիցները պետք է խստորեն հետևեն ու հավատարիմ լինեն հետևյալ արժեքներին.

- Պրոֆեսիոնալիզմ,
- Արդարություն,
- Համագործակցություն,
- Փոխադարձ հարգանք,
- Վստահություն,
- Նախաձեռնողականություն,
- Ընթացիկ աշխատանքներում անհրաժեշտ գաղտնիություն,
- Ծրագրերի և արդյունքների հրապարակայնություն:

4. Սկզբունքները և նպատակները

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հիմնված է երկու սկզբունքի վրա.

1. Օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերի զարգացման սկզբունք, որի իրագործման համար նախանշվում են հետևյալ ռազմավարական նպատակները.

- 1) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային ստանդարտներին համապատասխանող իրավական համակարգի ձևավորում,
- 2) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում համաձայնեցված պետական քաղաքականության իրականացում,
- 3) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներպետական համագործակցության ամրապնդում,
- 4) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդում:

2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասնակիցների կարողությունների զարգացման սկզբունք, որի իրագործման համար նախանշվում են հետևյալ ռազմավարական նպատակները.

- 1) ՓԼ/ԱՖ գործերով օպերատիվ հետախուզության, քրեական հետապնդման և դատական քննության իրականացման կարողությունների զարգացում,
- 2) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկող մարմինների կարողությունների բարելավում,
- 3) ՖԴԿ-ի՝ որպես ֆինանսական հետախուզության ազգային մարմնի կարողությունների զարգացում,
- 4) Հաշվետվություն տրամադրող անձանց մոտ ՓԼ/ԱՖ կանխարգելման կարողությունների զարգացում:

Վերը նշված սկզբունքների ներքո սահմանված ռազմավարական նպատակների իրագործումը մշտապես գտնվում է պատկան գերատեսչությունների ուշադրության կենտրոնում և համարվում է վերջիններիս աշխատանքային գործունեության բաղկացուցիչ մաս: Նպատակների իրագործումը կրում է պարբերական բնույթ, պահանջում է պատկան գերատեսչությունների կողմից շարունակական ու հետևողական քայլերի ձեռնարկում, ինչպես նաև նախքան հաջորդ ռազմավարության մշակումն ու ընդունումը կամ ըստ անհրաժեշտության ենթակա է բովանդակային ամփոփման:

Ռազմավարական նպատակների իրագործման առանձնահատկություններից, այդ թվում՝ ձեռնարկվելիք քայլերի հրատապությունից ու հաջորդականությունից ելնելով՝ Սկզբունք 1-ի ներքո նախանշված 1-ին նպատակի 1-ին միջոցառումը, Սկզբունք 2-րդի ներքո նախանշված 1-ին նպատակի 2-րդ միջոցառումը, 2-րդ նպատակի 1-ին և 2-րդ միջոցառումները, 3-րդ նպատակի 1-ին միջոցառումը և 4-րդ նպատակի 1-5-րդ միջոցառումները համարվում են բարձր առաջնահերթություն ունեցող: Մնացած միջոցառումներն իրագործվում են ընդհանուր (հավասար) առաջնահերթության սկզբունքով:

5. Իրագործումը

Ստորև ներկայացվում են սույն ռազմավարությամբ նախանշված նպատակների իրագործման համար ձեռնարկվելիք միջոցառումները, դրանց ակնկալվող արդյունքներն ու ներգրավված գերատեսչությունները և հաստատությունները:

Նպատակների իրագործման առաջնահերթությունը սահմանելիս կիրառվել է տարբերակված մոտեցում՝ «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի ռազմավարական վերլուծության» (2010թ.) արդյունքների հիման վրա, մասնավորապես, հաշվի առնելով ՓԼ/ԱՖ տեսանկյունից ռիսկայնության գործոնները, բնորոշված ռիսկերի մակարդակը, ներգրավված կողմերի (այդ թվում՝ հաշվետվություն տրամադրող անձանց) տեսակը և այլն:

Սկզբունք 1. Օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերի զարգացում

Նպատակ

1) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային ստանդարտներին համապատասխանող իրավական համակարգի ձևավորում

- **Միջոցառում (1)**

2012թ.-ին նոր խմբագրությամբ հաստատված ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականներին համապատասխան ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական համակարգի հետագա զարգացում

- **Ակնկալվող արդյունքը**

ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխանող, տարբեր ոլորտների առանձնահատկությունները հաշվի առնող և իրավական ստորակարգման մի շարք մակարդակներից կազմված օրենսդրական ակտերի ընդունում, դրանց կիրառության վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների հրապարակում

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

- **Միջոցառում (2)**

ա. ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ինքնագնահատման կազմակերպում և իրականացում

բ. Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից չորրորդ փուլի գնահատման նախապատրաստում և անցկացում

- **Ակնկալվող արդյունքը**

ա. ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ինքնագնահատման արդյունքների ամփոփում, բացահայտված թերությունների ու բացերի լրացում

բ. Չորրորդ փուլի գնահատման համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում, անհրաժեշտ այլ կազմակերպչական միջոցառումների համակարգված իրականացում

գ. Չորրորդ փուլի գնահատման հարցաշարի լրացում, գնահատման ընթացքի (գնահատող այցելմբի աշխատանքների) անխոչընդոտ կազմակերպում

դ. Երրորդ փուլի գնահատման հաշվետվության համեմատ չորրորդ փուլի գնահատման հաշվետվությամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի առաջընթացի արձանագրում

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

Նպատակ

2) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում համաձայնեցված պետական քաղաքականության իրականացում

- **Միջոցառում (1)**

Միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում բոլոր ռազմավարական խնդիրների, դրանց լուծմանն ուղղված միջոցառումների քննարկում և դիրքորոշումների համաձայնեցում

- **Ակնկալվող արդյունքը**

Ռազմավարական խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների հարցում համաձայնեցված դիրքորոշումների առկայություն

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ

- **Միջոցառում (2)**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գերատեսչությունների և հաստատությունների կատարած աշխատանքների ու դրանց արդյունքների վերաբերյալ Միջգերատեսչական հանձնաժողովին պարբերական հաշվետվողականության մեխանիզմի կատարելագործում

- **Ակնկալվող արդյունքը**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում կատարված աշխատանքների ու դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվողականության ապահովում և կատարողականի գնահատում

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ, Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարություն

Նպատակ

3) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներպետական համագործակցության ամրապնդում

- **Միջոցառում (1)**

ՀՀ իրավասու գերատեսչությունների և հաստատությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպությունների միջև առկա երկկողմ և բազմակողմ (միջգերատեսչական) համագործակցության ամրապնդմանն ուղղված մեխանիզմների բարելավում՝ փոխադարձ խորհրդատվությունների, համատեղ աշխատանքային խմբերի ստեղծման, համագործակցության նոր համաձայնագրերի կնքման/գործող համաձայնագրերի վերանայման և այլ միջոցներով

- **Ակնկալվող արդյունքը**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներպետական համագործակցության շրջանակներում ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ մեխանիզմների արդյունավետ համադրում

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

- **Միջոցառում (2)**

ՀՀ իրավասու գերատեսչությունների (ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ ԿԱ Ոստիկանության, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրո, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ) և ՖԴԿ-ի միջև միասնական տեղեկատվական տիրույթի ստեղծում՝ տեղեկատվության անվտանգ փոխանակման, տվյալների շտեմարանների՝ փոխհամաձայնեցված ծավալներով ու խորությամբ (ուղղակի կամ անուղղակի) հասանելիության ապահովման նպատակով

- **Ակնկալվող արդյունքը**

ա. ՀՀ իրավասու գերատեսչությունների և ՖԴԿ-ի միջև անվտանգ միջավայրում տեղեկատվության երկկողմանի և բազմակողմանի փոխանակման հնարավորության ընձեռում

բ. ՓԼ/ԱՖ վերլուծությունների համար հնարավորինս համապարփակ տեղեկատվական ռեսուրսների ապահովման միջոցով վերլուծությունների որակի ու արդյունավետության բարելավում

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ

Նպատակ

4) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդում

- **Միջոցառում (1)**

Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի, Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման հակազդման Եվրասիական խմբի հետ աշխատանքներին ակտիվ նախաձեռնողական մասնակցություն

- **Ակնկալվող արդյունքը**

Նշված կառույցներում Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ համակարգի կատարելագործման ուղղությամբ առաջընթացի պատշաճ ներկայացում, կառույցների անդամ երկրների հետ երկկողմ և բազմակողմ կապերի հաստատում ու խորացում

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ

- **Միջոցառում (2)**

Էզմոնտ խմբի շրջանակներում օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ համագործակցության ընդլայնում՝ թեկնածու ՖՀՄ-ների հովանավորման, անդամ ՖՀՄ-ների հետ համագործակցության նոր համաձայնագրերի ստորագրման, տեղեկատվության արդյունավետ փոխանակման, ինչպես նաև Էզմոնտ խմբի շրջանակներում դրսևորվող նախաձեռնություններում ակտիվ ներգրավման միջոցով

- **Ակնկալվող արդյունքը**

ՖԴԿ-ի՝ որպես ֆինանսական հետախուզության ազգային մարմնի կարգավիճակի միջազգային ամրապնդում և պրոֆեսիոնալ վարկանիշի բարձրացում, Էզմոնտ խմբի ընդհանուր շահերի նպաստմանն ուղղված գործողությունների արձանագրում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ

- **Միջոցառում (3)**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված միջազգային այլ կառույցների հետ աշխատանքների իրականացում՝ այդ կառույցների աշխատանքներին ներգրավման, դրանց հետ տեխնիկական օժանդակության ծրագրերի իրականացման միջոցով

- **Ակնկալվող արդյունքը**

Այլ միջազգային կառույցներում Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի պատշաճ ներկայացում, համակարգի հետագա բարելավման նպատակով միջազգային ռեսուրսների օգտագործում

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ

- **Միջոցառում (4)**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված իրավապահ ու վերահսկող մարմինների և օտարերկրյա պատկան մարմինների միջև երկկողմ հարաբերությունների խորացում՝ համագործակցության համաձայնագրերի ստորագրման, փոխադարձ շփումների, տեղեկատվության փոխանակման և այլ միջոցներով

- **Ակնկալվող արդյունքը**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրավասու իրավապահ ու վերահսկող մարմինների արդյունավետ համագործակցության իրականացում օտարերկրյա պատկան մարմինների հետ

- **Ներգրավված գերատեսչությունները**

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ

Սկզբունք 2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասնակիցների կարողությունների զարգացում

Նպատակ

1) ՓԼ/ԱՖ գործերով օպերատիվ հետախուզության, քրեական հետապնդման և դատական քննության իրականացման կարողությունների զարգացում

- **Միջոցառում (1)**

Քրեական հետապնդում իրականացնող մարմիններում ՓԼ/ԱՖ օպերատիվ հետախուզության ու քրեական հետապնդման մասնագիտացված ստորաբաժանումների (աշխատանքային խմբերի, աշխատակիցների) ձևավորում

- **Ակնկալվող արդյունքը**

ՓԼ/ԱՖ օպերատիվ հետախուզության ու քրեական հետապնդման մասնագիտացված ստորաբաժանումների (աշխատանքային խմբերի, աշխատակիցների) առկայություն

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

- **Միջոցառում (2)**

Քրեական հետապնդում իրականացնող մարմիններում և դատարաններում ՓԼ/ԱՖ օպերատիվ հետախուզության, քրեական հետապնդման և դատական քննության մասնագիտական հմտությունների զարգացում՝ ուսուցումների և վերապատրաստումների միջոցով

- **Ակնկալվող արդյունքը**

ա. ՓԼ/ԱՖ օպերատիվ հետախուզության, քրեական հետապնդման և դատական քննության արդյունավետության բարձրացում

բ. ՓԼ/ԱՖ հանցագործությունների քննության տակտիկայի և մեթոդիկայի, ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման հմտությունների բարելավում

գ. ՓԼ հանցակազմով առանձին գործերի քննություն և դատավճիռների հնարավոր առկայություն

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ դատական դեպարտամենտ

Նպատակ

2) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկող մարմինների կարողությունների բարելավում

- **Միջոցառում (1)**

Ֆինանսական հաստատություններում իրականացվող՝ հեռակա վերահսկողության և տեղերում ստուգումների գործընթացում ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների համապատասխանության ռիսկերի վրա հիմնված ստուգման կարողությունների զարգացում՝ ուղեցույցների տրամադրման, ուսուցումների, վերապատրաստումների և այլ եղանակներով

- **Ակնկալվող արդյունքը**

Վերահսկող մարմնի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացում և պատժամիջոցների կիրառում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՀՀ կենտրոնական բանկ

- **Միջոցառում (2)**

Վերահսկող մարմինների կողմից ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց նկատմամբ ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների կատարման մասով տեղերում ստուգումների և փաստաթղթային վերահսկողության ու պատժամիջոցների կիրառման մեխանիզմների ներդրում՝ ուղեցույցների տրամադրման, ուսուցումների, վերապատրաստումների և այլ եղանակներով

- **Ակնկալվող արդյունքը**

Վերահսկող մարմինների կողմից ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց նկատմամբ ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների կատարման մասով տեղերում ստուգումների և փաստաթղթային պատշաճ վերահսկողության իրականացում ու պատժամիջոցների կիրառում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՀՀ կենտրոնական բանկ, ՖԴԿ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

Նպատակ

3) ՖԴԿ-ի՝ որպես ֆինանսական հետախուզության ազգային մարմնի կարողությունների զարգացում

- **Միջոցառում (1)**

ՖԴԿ-ի կողմից իրականացվող վերլուծությունների գործընթացում կիրառելու նպատակով արդիական վերլուծական ծրագրային համակարգերի ձեռքբերում/մշակում և ներդրում

- **Ակնկալվող արդյունքը**

ՓԼ/ԱՖ վերլուծությունների որակի և արդյունավետության բարձրացում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ

- **Միջոցառում (2)**

ՖԴԿ-ի գործերի կառավարման ծրագրային համակարգի զարգացում

- **Ակնկալվող արդյունքը**

ՖԴԿ-ի ներքին գործընթացների օպտիմալացում, մասնավորապես՝ գործընթացների ավտոմատացման ժամանակակից գործիքների կիրառում և դրանց արդյունավետ կառավարում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ

- **Միջոցառում (3)**

ՖԴԿ կողմից հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ վերահսկողության իրականացմանն օժանդակելու կարողությունների զարգացում, իսկ վերահսկող մարմին չունեցող հաշվետվություն տրամադրող անձանց կամ վերահսկող մարմնին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերապահված գործառույթների իրականացման իրավական կարգավորման բացակայության դեպքում այդ հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ ՓԼ/ԱՖ պահանջների համապատասխանության տեսանկյունից ՖԴԿ կողմից իրականացվող վերահսկողության ներդրում և կարողությունների զարգացում

- **Ակնկալվող արդյունքը**

Վերահսկողական կարողությունների զարգացում, արդյունավետ վերահսկողության իրականացում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ

- **Միջոցառում (4)**

ՓԼ/ԱՖ միտումների և հնարավոր սխեմաների վերաբերյալ ռազմավարական վերլուծությունների իրականացում՝ ՖԴԿ պրակտիկ փորձի, ՓԼ/ԱՖ դատական գործերի և միջազգային տիպաբանությունների հիման վրա

- **Ակնկալվող արդյունքը**

ա. ՓԼ/ԱՖ միտումների և հնարավոր սխեմաների վերաբերյալ վերլուծությունների, այդ թվում՝ ՓԼ/ԱՖ տիպաբանությունների պարբերաբար ամփոփում և հրապարակում

բ. ՓԼ/ԱՖ տիպաբանությունների մշակման հմտությունների և տեխնիկայի բարելավում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ

- **Միջոցառում (5)**

ՖԴԿ-ի աշխատակիցների համար օտարերկրյա առաջատար ֆինանսական հետախուզության մարմինների հետ փորձի փոխանակման, ինչպես նաև միջազգային կառույցների/փորձագետների կողմից ՀՀ-ում գործնական ուսուցման դասընթացների կազմակերպում

- **Ակնկալվող արդյունքը**

Օտարերկրյա առաջավոր փորձի ներդրում ՖԴԿ-ի աշխատանքներում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ

- **Միջոցառում (6)**

ՓԼ/ԱՖ հանցագործությունների կանխարգելման և հակազդման ուղղությամբ հանրային իրազեկման միջոցառումների շարունակական իրականացում

- **Ակնկալվող արդյունքը**

Հանրային իրազեկման արդյունավետության բարձրացում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ

Նպատակ

4) Հաշվետվություն տրամադրող անձանց մոտ ՓԼ/ԱՖ կանխարգելման կարողությունների զարգացում

- **Միջոցառում (1)**

Հաշվետվություն տրամադրող անձանց ներքին դիտարկումների գործառույթն իրականացնող աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացում՝ ուղեցույցների տրամադրման, ուսուցումների, վերապատրաստումների և որակավորման միջոցով

- **Ակնկալվող արդյունքը**

Հաշվետվություն տրամադրող անձանց մոտ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում մասնագիտական բարձր որակներ ունեցող աշխատակիցների առկայություն

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

- **Միջոցառում (2)**

Հաշվետվություն տրամադրող անձանց ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերի՝ օրենսդրությանը համապատասխանության և կիրառության ապահովում՝ այդ ակտերի պարբերական դիտանցման, տեղեկում ստուգումների ժամանակ կիրառության արդյունավետության ստուգման միջոցով

- **Ակնկալվող արդյունքը**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությանը հաշվետվություն տրամադրող անձանց ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերի համապատասխանություն և դրանց կիրառման արդյունավետություն

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

- **Միջոցառում (3)**

Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՓԼ/ԱՖ հնարավոր կամ առկա ռիսկերի բացահայտման և գնահատման, բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարման և զսպման քաղաքականությունների, մեխանիզմների և ընթացակարգերի ներդրում ու զարգացում

- **Ակնկալվող արդյունքը**

Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՓԼ/ԱՖ ներքին հնարավոր կամ առկա ռիսկերի բացահայտում և գնահատում, դրանց հակազդման համարժեք գործիքների ապահովում և կիրառում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

- **Միջոցառում (4)**

ՓԼ/ԱՖ ներքին ռիսկերի բացահայտմանը և գնահատմանը համապատասխան ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման իրավական պահանջների պատշաճ կիրառելիության ապահովում՝ հեռակա վերահսկողության և տեղերում ստուգումների, ուղեցույցների տրամադրման, ուսուցումների, վերապատրաստումների և որակավորման միջոցով, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց՝ ՓԼ/ԱՖ նպատակներով օգտագործման ռիսկի նվազեցման նպատակով

- **Ակնկալվող արդյունքը**

Ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պատշաճ իրականացում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

- **Միջոցառում (5)**

Ոչ բանկ ֆինանսական հաստատությունների և ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց կողմից կասկածելի գործարքների/գործարար հարաբերությունների մասին հաշվետվությունների տրամադրման խրախուսում՝ ուղեցույցների տրամադրման, ուսուցումների, խորհրդատվությունների միջոցով

- **Ակնկալվող արդյունքը**

Ոչ բանկ ֆինանսական հաստատությունների և ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց կողմից կասկածելի գործարքների/գործարար հարաբերությունների մասին հաշվետվականության կատարողականի բարելավում

- **Ներգրավված գերատեսչությունները**

ՖԴԿ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպություններ

6. Վերանայումը և վերահսկողությունը

Սույն ռազմավարության իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարությունը անդամ գերատեսչությունների կողմից հավաքագրված տեղեկատվության ու նյութերի հիման վրա պարբերաբար զեկուցում է հանձնաժողովին ռազմավարության նպատակներին հասնելուն ուղղված միջոցառումների իրագործման և փաստացի արդյունքների վերաբերյալ:

Ռազմավարության նպատակներին հասնելուն ուղղված միջոցառումները ենթակա են ներառման Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչությունների, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպությունների աշխատանքային ծրագրերում:

Ռազմավարությունը ենթակա է վերանայման առնվազն եռամյակային պարբերականությամբ՝ Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարության գործառույթը կատարող ՖԴԿ-ի կողմից հանձնաժողովի անդամ գերատեսչությունների և հաստատությունների, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպությունների հետ համաձայնեցմամբ:

Ռազմավարության հաստատումից հետո ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դիսկի ռազմավարական նոր վերլուծություն իրականացնելու դեպքում դրա արդյունքներից բխող անհրաժեշտ փոփոխությունների կատարման հարցը ենթակա է քննարկման Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: